ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 մայիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

76
(2742)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ԳԵՐԱԴԱՍԵԼՈՎ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԸ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻՑ



Մինչ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը սպառնալիքներ է ուղղում Արցախում ապրող հայերի նկատմամբ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը զբաղված է վարչապետի գավաթի մասնակցելով:

Մայիսի 28-ին Ադրբեջանի նախագահը հայտարարել էր, որ Ղարաբաղի հայերը ընդամենը «մեկ տարբերակ» ունեն՝ «ենթարկվել Ադրբեջանի օրենքներին, լինել Ադրբեջանի լոյալ եւ նորմալ քաղաքացի, աղբանոց նետել իրենց կեղծ պետական ատրիբուտներն ու լուծարել խորհրդարանը»: Իսկ այս հայտարարություններին զուգահեռ՝ նույն օրը առավոտյան, Նիկոլ Փաշինյանն ու թիմակիցներն այցելեցին Սարդարապատի հուշահամալիր, այդ այցի համար ագամ ճանապարհներ փակվեցին: Արդեն նույն օրը՝ երեկոյան, Նիկոլ Փաշինյանն ուրախ տրամադրությամբ մասնակցում էր Վարչապետի գավաթի: «Ուզում եմ ընդգծել, որ հաջորդ տարվանից մենք այս մրցաշարի՝ խճուղային հեծանվավազքի մասշտաբները կընդլայնենք: Մրցումը նախ կմիջազգայնացնենք, այսինքն՝ բոլորը, անկախ քաղաքացիությունից, մասնակցելու հնարավորություն կունենան: Մրցաշարը կլինի Սեւանի շուրջը: Եթե անհրաժեշտություն լինի, մասնագետները կասեն, երկու օր կտեւի հեծանվավազքը, եւ, իհարկե, մրցանակային հիմնադրամն էլ համապատասխան կկրկնապատկվի»: Այսինքն՝ Հայաստանի եւ Արցախի համար այս կարեւոր ժամանակահատվածում, երբ բազմաթիվ անվտանգային խնդիրներ են առկա, Փաշինյանը մտածում է հեծանվավազքի մասշտաբները մեծացնելու մասին, որն էլ իր հերթին հանգեցնելու է մեծ թվով ծախսերի: Ահա թե ինչերի մասին են խոսում եւ ինչով են զբաղվում նույն օրում ՀՀ վարչապետն ու Ադրբեջանի ղեկավարները եւ ինչպես են գնահատում իրենց ղեկավարած երկրների ռիսկերն ու շահերը:




ՔՊ-ականներն այս օրերին լծվել են մարզերում իրենց վարկանիշի բարձրացման գործին: Նրանք մեծ ակտիվություն են ցուցաբերում մարզերում: Օրինակ՝ կիրակի օրը Գեւորգ Պապոյանը, Վաղարշակ Հակոբյանը, Նարեկ Գրիգորյանը եւ Ալխաս Ղազարյանը այցելել էին Գեղարքունիքի մարզ, հանդիպել տեղի բնակիչների հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ մարզպետ Կարեն Սարգսյանը: «Ժողովուրդ» օրաթերթին հաջողվեց պարզել՝ինչն է մարզերում այս ակտիվության պատճառը: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ականներն անհանգստացած են Երեւանում իրենց ցածր վարկանիշով, հիմա հրահանգ են ստացել գնալ մարզեր, շոշափել այնտեղի բնակիչների տրամադրությունները, հասկանալ՝ կողմ են արդյոք իրենց վարած քաղաքականությանը, ինչ են կարծում, այսպես կոչված, խաղաղության պայմանագրի մասին, ինչն իրենց համար դրոշակ են դարձրել իշխանությունները եւ ցանկացած զիջման ու սահմանային միջադեպի դեպքում առաջ են քաշում իրենց խոստացած խաղաղության օրակարգը, որն այդպես էլ չի գալիս: Այսպիսով, ՔՊ-ականները ցանկանում են նաեւ մարզերի բնակիչներին ցույց տալ, որ իրենք մտահոգված են մարզերի խնդիրներով եւ ձեռնամուխ են դրանց շուտափույթ լուծմանը: Մեր տեղեկություններով, սակայն, արդյունքները, մեղմ ասած, այդքան էլ հուսադրող չեն. նրանց՝մարզեր այցերն էլ փաստում են, որ վերջին շրջանում, ինչպես Երեւանում, մարզերում նույնպես Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի վարկանիշը կտրուկ իջել է ու շարունակում է նվազել՝բոլոր հարցումներով:



Կիրակի օրը Գեղարքունիքում մեծ շուքով «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարն էր անցկացվել, որին մասնակցում էին Նիկոլ Փաշինյանը եւ նախարարներ Ժաննա Անդրեասյանը, Անահիտ Ավանեսյանը եւ Վահան Քերոբյանը: Թերեւս հարց է առաջանում՝ ի՞նչ կապ կարող է ունենալ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հեծանվավազքի հետ, Հայաստանի տնտեսությո՞ւնն է զարգացնում՝ այս միջոցառմանը մասնակցելով, թե՞ հանուն վարչապետի է մասնակցել: Առհասարակ, վերջին շրջանում Քերոբյանն այստեղ, այնտեղ եւ ամենուր է: Բայց սա, թերեւս, հարցի մի մասն է միայն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի մրցաշարը խայտառակ միջադեպերով է ուղեկցվել: Նախ ողջ օրվա ընթացքում փակ է եղել Ճամբարակի ճանապարհը, ընդ որում՝ քաղաքացիները նախապես տեղյակ չեն եղել դրա մասին: Քաղաքացիները երկար ճանապարհ են կտրել, հասել ճանապարհի այդ հատվածը, նոր միայն պարզել, որ փակ է մրցաշարի պատճառով, այլեւս չեն կարող շարունակել ճանապարհը, ինչը վարորդների վրդովմունքն է առաջացրել, բունտ է հասունացել: Սա թերեւս ցույց է տալիս իշխանությունների անպատասխանատու եւ արհամարհական վերաբերմունքը սեփական քաղաքացիների նկատմամբ, այն քաղաքացիների, որոնց առջեւ խոնարհվում էր տարիներ առաջ Փաշինյանը: Հատկանշական է նաեւ, որ «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքն անցկացվում է մի մարզում, որը պատերազմից հետո հայտնվել է Ադրբեջանի թիրախում. թշնամին պարբերաբար կրակում է Գեղարքունիքի գրեթե բոլոր գյուղերի ուղղությամբ, Սոթքի հանքավայրը փակվել է, 800-ից ավելի քաղաքացիներ մնացել են առանց աշխատանքի: Չնայած այս ամենին՝ վարչապետը եւ նախարարները ուրախ դեմքով Գեղարքունիքում հեծանվավազքի մրցույթի են մասնակցում, կարծես թե դա է օրհասական խնդիրը:





«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վարժական հավաքները թակել են նաեւ քաղաքական իշխանության մտերիմների դռները, եւ քաղաքական իշխանության թիմում գտնվողները ծանոթ, մտերիմ են փնտրում, որպեսզի բարեխոսեն ՊՆ վերնախավի մոտ՝ իրենց ծանոթ հարազատներին վարժական հավաքների չտանեն: Հիշեցնենք, որ Հայաստանում մարտից մեկնարկել է պահեստազորայինների վարժական հավաքների նոր փուլը: Այս անգամ դրանք, երեք ամսվա փոխարեն, 25 օր են տեւում: Առաջին փուլով հավաքներին կմասնակցեն ավելի քան 3 հազար քաղաքացիներ: 25-օրյա հավաքները պարտադիր է 20-ից 55 տարեկան բոլոր պահեստազորայինների համար: «7 օր քաղաքացին անցնում է պատրաստություն, 14 օր իրականացնում է մարտական հերթապահություն, բայց դա լինում է պարտադիր Հայաստանի Հանրապետության բոլոր զինապարտ քաղաքացիների համար», - ասել էր պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը: Մենք կհետեւենք՝ հասկանալու համար, թե իշխանության օղակներում ով ինչ ծանոթի միջոցով կարողացավ «պլստալ» վարժական հավաքից:

ԱՐՁԱԳԱՆՔ

# «ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՍԱԾԸ ԱԲՍՈՒՐԴ Է»

**Վերջերս Նիկոլ Փաշինյանը ԱԺ ամբիոնից հայտարարեց. «Երեսուն տարի է՝ ապրում ենք մի երկրում, որը «կադաստրի վկայական» չունի». սա մեկնաբանությունների մեծ ալիք առաջացրեց: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի հետ:**



**-Պարոն Սարգսյան, վերջերս ԱԺ ամբիոնից Նիկոլ Փաշինյանը հերթական անհասկանալի արտահայտությունը արեց, որը տարբեր մեկնաբանությունների առիթ տվեց: Ասում է. «30 տարի է՝ մենք ապրում ենք մի երկրում, որը «կադաստրի վկայական» չունի»: Նախ՝ ինչպե՞ս կմեկնաբանեք, ի՞նչ է նշանակում «երկրի կադաստրի վկայական», ու արդյոք սրանով Նիկոլ Փաշինյանը հարցականի տակ չի՞ դնում Հայաստանի՝ որպես իրավական պետության գոյությունը:**

-Ախր, ինքը ո՞վ է, որ հարցականի տակ դնի մի ամբողջ պետության գոյությունը: Իր նման վարչապետներ մենք ունեցել ենք տասնյակներ, երեկվա վաչապետին էլ անգամ չենք հիշում, էնպես որ սրա դարն էլ կգա, կանցնի, կմոռանան: Կամ էլ չեն մոռանա, որպեսզի իրեն պատասխանատվության կանչեն: Դա, ըստ էության, այնքան աբսուրդային հարց է: Ինքը հատուկ է անում, որպեսզի բոլորը սկսեն քննարկել: Էն, որ ասում են՝ «մի հիմար քարը գլորում է փոսը, հարյուրը չեն կարողանում հանել», հիմա սա է: Խոսքը, որպեսզի ժողովուրդը մի փոքր հասկանա՝ ինչի մասին է, ասեմ. եթե մենք արդեն ՄԱԿ-ի անդամ ենք, եւ ինքն էլ իր բերանով ասում է, որ 1991 թվականի ԱՊՀ երկրների միության դեկլարացիայով մեր սահմանները որոշված են (իր պատկերացմամբ՝ սխալ է, բայց դա ուրիշ հարց է) էլ ո՞նց ես դու ասում, որ կադաստր է, չգիտեմ ինչ է:

Ընդհանրապես էդպիսի հասկացություն քաղաքականության մեջ չկա՝ «կադաստրի վկայական»: Այսինքն՝ ի՞նչ ես ուզում ասես՝ քո Հայաստանի կադա՞ստրը դա պիտի ձեւակերպի, քեզ տա, թե՞ Ադրբեջանի: Էդ դեպքում դու էլ Ադրբեջանի Կադաստրին պիտի դիմես: Այնքան աբսուրդի թատրոնից է, որ քննարկելն անհարմար էլ է: Ինքը թող նստի, քննարկի իր էդ Ալեն Սիմոնյանի, չգիտեմ՝ էլ ով կա էդտեղ, էդ կարկառուն դեմքերի հետ միասին, միգուցե դրանից բավականություն ստանան:

**-Պարոն Սարգսյան, երեկ Մոսկվայում կայացավ Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների հանդիպումը: Ինչպե՞ս կգնահատեք այս հանդիպումը: Ըստ էության, կարծես որեւէ փաստաթուղթ չստորագրվեց, ու որեւէ համաձայնություն ձեռք չբերվեց:**

-Ես համոզված եմ, որ այդ անձը՝ Նիկոլ Փաշինյանը, ուներ հանձնարարություն՝ Մոսկվայում ոչ մի համաձայնության չգալու: Իհարկե, մենք այս պահին դեմ ենք ընդհանրապես որեւէ համաձայնության Ադրբեջանի հետ. ես ուզում եմ դա հատուկ շեշտել: Ամեն դեպքում, տեսեք, օրինակ՝ Ալիեւն ասում է. «Ադրբեջանի քաղաքացիները որեւէ խնդիր չունեն Արցախի տարածքով գնալ-գալու: Այսինքն՝ ինքը համարում է, որ նրանք արդեն Ադրբեջանի քաղաքացիներ են: Սուտ: Արցախի Հանրապետությունում չկա գեթ մեկը, որ ընդունել է Ադրբեջանի քաղաքացիություն: Նրանք բոլորը ունեն ՀՀ անձնագիր,այսինքն՝ իրենք մեր քաղաքացիներն են, Հայաստանի վարչապետը պապանձված չի առարկում դրա վերաբերյալ: Սա՝ մեկ:

Երկրորդը՝ երբ որ նա նրան ասում է, որ Դուք ինձ մեղադրում եք այն բանում, որ, իբրեւ թե, ես Զանգեզուրի միջանցքի մասին եմ խոսում... Ի՞նչ է Ասում Ալիեւը. ասում է՝ դա մեր իրավունքն է նախաձեռնող լինել, այսինքն՝ ասում է, որ դու էնքան ապուշ ես, որ չես հասկանում, որ մենք ընդամենը նախաձեռնել ենք, դու էլ կարող ես չհամաձայնել, ու դրանով ամեն ինչ կավարտվի: Իսկ դու նստել ես, էդ ամենը լուրջ քննարկում ես:

Դու պիտի ասես, որ չկա այդպիսի հարցադրում ու վերջ: Փակում ես այդ թեման ընդհանրապես:

Բացի այդ ամենից, հասկանում եք, չէ՞, երբ որ մարդ չի կարողանում ձեւակերպել այն, ինչը որ անհրաժեշտ է, դառնում է ծաղրանքի առարկա, եւ պետության ղեկավարը իրավունք չունի կմկմալով խոսել: 10 րոպեի ընթացքում 2 րոպե է խոսել ինքը, մնացածը կմկմում էր ինքը: Սա այն իրավիճակն է, որ դրա համար իրեն լուրջ չեն ընդունի:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# Ի՞ՆՉ ԹՂԹԵՐ ԷԻՆ ԱՅՐՎԵԼ

**Նախօրեին համացանցում աղմկահարույց տեսանյութ տարածվեց, որտեղ երեւում է՝ ինչպես են Ծիծեռնակաբերդի այգում՝ Հայոց ցեղասպանության թանգարանի մոտ, արկղերով մեծ քանակությամբ տարբեր թղթեր այրում:**

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամն ավելի ուշ պարզաբանում էր տարածել, թե համացանցում տարածված տեսանյութում երեւացող արկղերում առկա թղթերը ՀՑԹԻ-ի տարբեր տարիներին կազմակերպած ցուցադրությունների, գիտաժողովների, դասախոսությունների աշխատանքային կրկնօրինակների սեւագրերն են:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ առավոտից եղել է դեպքի վայրում՝ պարզելու, թե, ի վերջո, ինչ է կատարվել Ցեղասպանության թանգարանի բակում, ինչ թղթեր են այրվել, եւ որն է եղել նպատակը: Մի քանի ժամ տարածքում շրջելու ընթացում այնտեղ, բացի անվտանգության աշխատակիցներից, որեւէ մեկին գտնել չհաջողվեց, իսկ թանգարան-ինստիտուտը փակ էր. չէին աշխատում:

Նշենք նաեւ, որ թանգարանի ղեկավարի հետ կապ հաստատել առհասարակ չի հաջողվում. կառույցի տնօրեն Հարություն Մարությանը նույնիսկ հեռախոսազանգերին չի պատասխանում:

Հիշեցնենք, որ Հարություն Մարությանը կառույցի տնօրեն է ընտրվել 2018 թվականի սեպտեմբերի 14-ին, որից առաջ կառույցը ղեկավարել է Հայկ Դեմոյանը: Մարությանի ընտրվելուց ամիսներ առաջ վեճ էր ծագել թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն Հայկ Դեմոյանի եւ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանի միջեւ, որից հետո լրագրողների հետ զրուցում ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանն ասել էր, որ դեռեւս 2017 թվականի դեկտեմբեր ամսին որոշում է կայացվել՝ «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հիմնադրամ դարձնելու մասին: Նշանակվել էր նաեւ հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար, որը պետք է ղեկավարեր թանգարան-ինստիտուտը մինչեւ նոր տնօրենի ընտրությունները:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի հովանավորությամբ տնօրեն նշանակված Հարություն Մարությանի ղեկավարության տակ գտնվող կառույցում աշխարհի տարբեր ծայրերից ցեղասպանության մասին վկայող թղթերը տարիներով թանգարանում որպես փաստ պահվելուց հետո հիմա մի քանի րոպեում այրվում են:

Միջադեպի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգել էր մի քաղաքացի, որը պատմեց, որ թղթերը այրվել են հենց թանգարանի բակում: Թանգարանի աշխատակիցներն իրենք են արկղերով թղթերը դուրս հանել, իսկ դրանք վառելն իրականացնում է «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում:

«Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության պետ Արթուր Աղաբեկյանն ասաց, որ իրենց աշխատակիցները որեւէ կապ չունեն դեպքի հետ: Փաստ է մի բան, որ թանգարանը բարձիթողի վիճակում է, ու բոլորն անում են այն, ինչ ցանկանում են:

*ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ*

## ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ



Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ մշտապես գործուղումների մեկնող Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը նաեւ Մոլդովայում կլինի նրա հետ: Բանն այն է, որ Արմեն Գրիգորյանը վարչապետի՝ տարբեր երկրներ այցից մի քանի օր առաջ է անգամ մեկնում տվյալ երկիր, հանդիպումներ ունենում, մինչեւ գալիս է Փաշինյանը: Այս անգամ Արմեն Գրիգորյանը Նիկոլ Փաշինյանին կմիանա Մոլդովայում, որտեղ վարչապետը կմասնակցի Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Արմեն Գրիգորյանը, նրա օգնական Սեւակ Ղահրամանյանը եւ անվտանգության խորհրդի գրասենյակի քաղաքական, սոցիալական եւ տնտեսական անվտանգության վարչության խորհրդական, կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Արշակ Մուսախանյանը մայիսի 30-ից մինչեւ հունիսի 2-ը ներառյալ կգործուղվեն Սլովակիայի Հանրապետություն, ապա՝ Մոլդովա:

Այս այցը եւս կլինի պետբյուջեի հաշվին: Առհասարակ, Արմեն Գրիգորյանը պետբյուջեի հաշվին ամենից շատ գործուղման մեկնող պաշտոնյաներից մեկն է: Վերջինս նաեւ Մոսկվայում էր, երբ Փաշինյանը մասնակցում էր ԵԱՏՄ Բարձրագույն խորհրդի նիստին, ապրիլ ամսին էլ նա Իրանում էր եւ այդպես շարունակ: Ընդ որում՝ նա գործուղման գրեթե մշտապես մեկնում է իր օգնականի հետ, բնականաբար՝ կրկին պետբյուջեի հաշվին:

## «ԾԽԱԽՈՏ ԷԼ ՉԵՄ ԾԽՈՒՄ»

Մայիսի 3-ին Ազգային ժողովում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Էդուարդ Աղաջանյանը հայտարարել էր, որ որեւէ միջին վիճակագրական խնջույք առանց թմրանյութերի չի անցնում, եւ հարց էր ուղղել ՆԳ նախարար Վահե Ղազարյանին, թե ինչով է պայմանավորված այն հանգամանքը, որ ոստիկանական ռեյդերն անցկացվում են որոշակի ենթամշակութային առանձնահատկություն ունեցող ժամանցի վայրերում:

Ի պատասխան՝ Վահե Ղազարյանը նշել էր, որ իրենք օպերատիվ ստացված տվյալների հիման վրա են ռեյդեր իրականացնում եւ ուղղակի պարտավոր են արձագանքել այդ օպերատիվ տեղեկություններին. «Դրանով մենք մեծ խոչընդոտ չենք հանդիպացել տվյալ տնտեսվարողին:

Ինձ թվում է՝ մենք կատարել ենք մեր գործառույթները, կարեւորը մենք ունենք արդյունք. այ եթե չունենային արդյունք, դա հարցի մյուս կողմն է»,- ասել էր նա՝ ընդգծելով, որ ոստիկանության գործողությունների իրավաչափության հարցով գործընթաց կա:

Ավելին՝ ԱԱԾ-ն 1 տոննա Հերոին Հայաստան ներմուծելու մասին հայտնեց:

ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց, թե վերջին անգամ երբ է խնջույքի մասնակցել եւ ինչ թմրանյութ է օգտագործել:

-Խնջույքի վերջին անգամ մոտավորապես 10 օր առաջ եմ մասնակցել. ինչ վերաբերում է թմրանյութ օգտագործելուն, ընդհանրապես չեմ ծխում: Իմ անունը որեւէ մեկը չի ավելացրել այդ ցուցակներում՝ լավ իմանալով, որ ես նույնիսկ սովորական ծխախոտ էլ չեմ ծխում, այսինքն՝ կարիք չկա ուրիշ ցուցակներում ավելացնելու: Մնացածը, կարծում եմ, գործընկերներս բացատրել են, թե ինչու են այդպես արտահայտվել կամ ինչ կարծիք ունեն: Համենայնդեպս, այն շրջապատը, որը ես ունեմ, նման խնդիր չկա. ամեն ինչ կարգին է:

Խոսելով Հայաստան ներմուծված 1 տոննա Հերոինի մասին՝ Սանոսյանն ասաց.

- Չափազանց մտահոգիչ է, որովհետեւ եթե մեր երկրի համար է դա ներմուծված, նշանակում է՝ այդքան սպառում կա: Եթե մեր երկրի համար չէ, բերվել է, այլ տեղ պիտի տարվի, դա եւս վատ է. նշանակում է մեր երկիրը կարող է տարանցիկ երկիր դառնալ թմրամիջոցների առք ու վաճառքի համար: Այսինքն՝ ցանկացած սցենարի դեպքում դա լավ չէ: Այս ամբողջ պատմության մեջ լավն այն է, որ մեր իրավապահ համակարգը կարողացել է այդ պրոցեսն իրականացնել, եւ կարծում եմ՝ քննության փուլում բոլոր մանրամասները եւ՛ Դուք, եւ՛ ես, եւ՛ մեր հայրենակիցները կիմանանք:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ

**«2022 թիվն ընդգծվեց Հայաստանի նկատմամբ սեղտեմբերյան ագրեսիայով»,- հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2022թ. պետական բյուջեի կատարողականի նախնական քննարկումների ժամանակ:**



Նրա խոսքով՝ տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրությունը շարունակում է մնալ բավականին լարված. «Դա կապված է ոչ միայն մեր ունեցած բարդ հարաբերությունների հետ, այլեւ գլոբալ պրոցեսների, ՌԴ-Ուկրաինա հակամարտության հետ: Հիմա շատ տագնապալի լուրեր ենք ստանում Իրանի եւ Աֆղանստանի սահմանի տեղի ունեցող իրադարձություններից եւ այլն»:

Փաշինյանը նշեց, որ իշխանությունը որդեգրել է խաղաղության օրակարգ ու ռազմավարություն եւ անում է հնարավորը՝ այն կյանքի կոչելու համար: Նա հիշեցրել է, որ նախորդ շաբաթ Մոսկվայում տեղի է ունեցել Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան եռակողմ ձեւաչափով բանակցային հերթական փուլը: Վարչապետը որոշ մանրամասներ է բացահայտել. «Տեղեկացնեմ, որ քննարկման թեմաներից մեկը վերաբերում էր ԼՂ-ում հաստատված հումանիտար իրավիճակին եւ Լաչինի միջանցքի ապօրինի փակմանը: Այս թեման քննարկել ենք նաեւ ՌԴ մեր գործընկերների հետ, եւ չեմ կարող ասել, որ արդյունքները գոհացնում էե: Պետք է արձանագրենք, որ սա շատ ցավալի իրավիճակ է»,- ասել է նա:

Փաշինյանը հիշեցրել է, որ առիթ ունեցել է ասելու, որ Լաչինի միջանցքի փակումը տեղի է ունեցել ռուս խաղաղապահների աչքի առաջ եւ ներկայությամբ, ինչը եւս մտահոգիչ է. «Այս իրադրության կարգավորման ուղղությամբ մենք շարունակելու ենք քննարկումները, այդ թվում՝ ռուսաստանցի գործընկերների հետ»:

Նա պատմել է, որ Մոսկվայում քննարկվել է նաեւ տարածաշրջանային կոմունիկացիաների բացման հարցը: Ըստ վարչապետի՝ Հայաստանը պատրաստ է դրան, բայց դա պետք է տեղի ունենա 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարության հիման վրա. «Մենք ընդգծել ենք, որ երկրների սուվերենության եւ իրավազորության ներքո պատրաստ ենք շատ արագ կոմունիկացիաների վերաբացմանը: Փորձում ենք աշխատել երկաթուղային ենթակառուցվածքների բացման վրա: Մենք տրամադրված ենք ու շահագրգիռ, որ տարածաշրջանային կոմունիկացիաները բացվեն»:

Նա շեշտել է, որ այդ հարցի լուծումը միայն Հայաստանից չի կախված:

Նա հիշեցրել է, որ Հայաստանն ու Ադրբեջանը պայմանավորվել են փոխադարձաբար ճանաչել միմյանց 29.8 հազար եւ 86.6 հազար կմ2 տարածքները? «Առնվազն հասկանալի չեն Ադրբեջանի նախագահի՝ երեկ արած մի շարք հայտարարություններ: Այստեղ եւ՛ Ադրբեջանը, եւ՛ միջազգային գործընկերները պետք է առնվազն պարզաբանեն՝ արդյոք դա նշանակում է հրաժարում Բրյուսելում ձեռք բերված պայմանավորվածություններից»,- ասել է նա, ապա, դիմելով ԱԳ նախարար Արարատ Միրզոյանին, ասել, թե միջազգային գործընկերներից պետք է այս ուղղությամբ պարզաբանումներ ստանալ. «Եթե նշանակում է հրաժարում (իսկ տեքստը, որ հնչել է, շատ մոտ է դրան), ես չեմ ուզում մեկնաբանություն անել: Կարծում եմ՝ պետք է այստեղ լրացուցիչ ճշգրտումներ անել, որ մեր հետագա գործողությունները պլանավորենք»:

Ըստ վարչապետի՝ առաջիկայում Մոլդովայում տեղի է ունենալու հնգակողմ հանդիպում, որին մասնակցելու են ինքը, Ադրբեջանի նախագահը, ԵՄ նախագահը, Ֆրանսիայի նախագահն ու Գերմանիայի կանցլերը. «Քննարկում կար, թե հնարավոր է՝ հունիսի 1-ին խաղաղության պայմանագիր ստորագրվի: Ես ասեմ, որ դեռ չենք ստացել Ադրբեջանի մեկնաբանությունները Վաշինգտոնից առաջ մեր փոխանցած առաջարկների վերաբերյալ: Սա խաղաղության պայմանագրի չորրորդ խմբագրումն է. մենք մեր խմբագրումը փոխանցել ենք ադրբեջանական կողմին եւ դեռեւս դրա մեկնաբանությունները չենք ստացել: Հետեւաբար, այս պահին չկա համաձայնեցված նախագիծ, որ հնարավոր լիներ ստորագրել»:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

# ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ՝ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅՈՒՄ

**ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարույթային գործողությունների արդյունքում պարզվել են Երեւանի 25-ամյա բնակչի կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դեպքի մի շարք հանգամանքներ. հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից:**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրիի քաղաքի Կումայրիի բաժնում ստացված տեղեկություններն իրացնելիս՝ 2023թ. մայիսի 26-ին՝ ժամը 20:40-ին, Գյումրիի քաղաքի Երեւանյան խճուղում ապօրինի թմրանյութ ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով հիշյալ երիտասարդը ձերբակալվել եւ իր կողմից շահագործվող OPEL ASTRA G մակնիշի ավտոմեքենայի հետ միասին տեղափոխվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Գյումրիի քաղաքի Կումայրի բաժին:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով եւ 396-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում խուզարկություններ են կատարվել 25-ամյա երիտասարդի բնակության վայրում եւ վերջինիս կողմից վարած OPEL ASTRA G մակնիշի ավտոմեքենայում, որի ընթացքում վերջինս ավտոմեքենայի սրահի տարբեր հատվածներից ներկայացրել է ընդհանուր 140 հատ կպչուն ժապավենով փաթեթավորված զանգված, չորս հատ կաթոցիչ, ինչպես նաեւ մեկ հատ էլեկտրոնային կշեռք:

Ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 25-ամյա երիտասարդը չպարզված հանգամանքներում ապօրինի ձեռք է բերել ու պահել առանձնապես խոշոր չափերով Մեթամֆետամին եւ MDMB(N)-022 տեսակի թմրամիջոցներ, որից հետո Մեթամֆետամին տեսակի թմրամիջոցից առանձնապես խոշոր չափերով՝ 1,52 գրամ քաշով թմրամիջոցը՝ իրացման համար նախապես կշռված եւ հարմար փաթեթավորված 10 փաթեթներում, ինչպես նաեւ MDMB(N)-022 տեսակի թմրամիջոցից առանձնապես խոշոր չափերով՝ 1,57 գրամ քաշով թմրամիջոցը՝ իրացման համար նախապես կշռված եւ հարմար փաթեթավորված 5 փաթեթներում, իրացնելու նպատակով 2023 թվականի մայիսի 26-ին՝ ժամը 20:40-ի սահմաններում, իր կողմից վարված OPEL ASTRA G մակնիշի ավտոմեքենայով տեղափոխել է Գյումրի քաղաքի Երեւանյան խճուղու մոտակա տարածք, որտեղ վերջինս հայտնաբերվել է Ներքին գործերի նախարարության ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողների կողմից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ երիտասարդի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

ԿԱՇԱՌՔ

# ԵՊՀ-Ն՝ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

**Մայիսի 24-ին հայտնի դարձավ, որ կաշառք ստանալու մեղադրանքով ձերբակալվել են ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը, նրա տեղակալը, նույն ֆակուլտետի երկու դասախոսներ՝ Գագիկ Տոնոյանն ու Արմեն Ներսիսյանը, ինչպես նաեւ վերջիններիս կաշառք տված 5 անձինք: Հակակոռուպցիոն կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ 2023 թվականի փետրվարից մարտն ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետի տարբեր կուրսերում սովորող ուսանողների օգտին ապօրինի գործողություններ կատարելու դիմաց, որպես կաշառք պահանջել եւ ստացել են տարբեր չափի գումարներ:**



Ըստ հաղորդագրության՝ Գագիկ Տոնոյանը, առանց ֆակուլտետի ուսանողի գիտելիքները ստուգելու, վերջինիս դրական գնահատականներ նշանակելու համար ուսանողից պահանջել է յուրաքանչյուր քննության համար 120.000-ական, ընդհանուր՝ 480.000 դրամ կաշառք, այնուհետեւ այդ մասին տեղեկացրել է ֆակուլտետի դեկանին: Բացի այդ, դեկանը տեղակալ, նույն ֆակուլտետի ամբիոնի դոցենտ Արմեն Ներսիսյանի հետ մեկ այլ ուսանողի օգտին թողտվություն, հովանավորչություն եւ ապօրինի գործողություն կատարելու դիմաց ստացել են կոնյակ եւ 4000 ԱՄՆ դոլար կաշառք:

«Ժողովուրդ» օրաթերթն այդ ֆակուլտետի ուսանողներից ահազանգեր է ստացել, որ դեկանը եւ դասախոսները հստակ գումարային ցանկ են ունեցել քննություններն անցկացնելու համար: Ընդ որում՝ հեռակա սովորող ուսանողների համար գնային այլ ցանկեր են գործել, իսկ առկա սովորողների համար՝ այլ:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ եղավ ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետում՝ հասկանալու՝ ինչ իրավիճակ է այնտեղ:

Նախ՝ համալսարանում քննական աժիոտաժ էր, ուսանողները միջանկյալ քննություններ էին հանձնում:

Ուսանողները, որոնք հետագա անախորժություններից խուսափելու համար չէին ցանկանում ներկայանալ, մեզ պատմում էին, որ թեեւ իրենք անձամբ նման խնդիրների չեն բախվել, բայց այլ ուսանողներից հաճախ են ահազանգեր ստացել, որ քննությունը ստանալու համար գումար են իրենցից պահանջել:

Ֆակուլտետի դասախոսները եւս չէին ցանկանում ներկայանալ, խուսափողական էին խոսում, գուցե անհանգստացած էին, որ դեկանը հնարավոր է վերադառնա աշխատանքի, եւ չէին ցանկանում թշնամանալ նրա հետ:

Մեզ հետ զրույցում ֆակուլտետի փոխդեկան Աստղիկ Փարսյանն ասաց, որ երկար տարիներ է՝ աշխատում է համալսարանում, բայց ուսանողներից նման ահազանգեր չի ստացել, նորմալ հարաբերություններ են եղել թե՛ դեկանի, թե՛ դասախոսների հետ: Մեր զրուցակիցները հիմնականում խուսափում էին տեսախցիկի առջեւ խոսելուց հետագայում խնդիրներ չունենալու համար: Մասնավոր զրույցներում նշում էին, որ այս հարցը մշտապես եղել է իրենց ֆակուլտետում, ու, կարելի է ասել, որ այն տարիների պատմություն ունի: Առաջիկայում ինչ հանգուցալուծում կստանա այս հարցը՝ դժվար է ասել, քանի որ իրավապահ համակարգը շատ գործ ունի անելու՝ բացահայտելու համար, թե ինչպես է տարիներ շարունակ նման կոռուպցիայի մեջ «թաղված» եղել այդ ֆակուլտետը:

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում նախորդ տարի Ոստիկանության ծառայողների միջին աշխատավարձը՝ ներառյալ պարգեւատրումները, կազմել է 289 հազար դրամ:

Այս մասին ասաց Ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում «ՀՀ 2022թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների ժամանակ:

Հաշվետու տարում Ոստիկանության ճշտված ծրագրային ցուցանիշը կազմել է 80.9 մլրդ դրամ՝ 2021 թվականի 67.3 մլրդ դրամից 13.6 մլրդ դրամով կամ 20.2 տոկոսով ավելի:

«Ընդհանուր հատկացումներում ընթացիկ ծախսերը կազմել են 69.4 մլրդ դրամ՝ 2021 թվականի 64.4 մլրդ դրամի նկատմամբ 5 մլրդ դրամով կամ 7.8 տոկոսով ավելի: Կապիտալ ծախսերը եղել են 11.5 մլրդ դրամ՝ 2021 թվականի 2.9 մլրդ դրամից 8.6 մլրդ դրամով կամ շուրջ 4 անգամ ավելի»,-ասաց Ֆիդանյանը:

Նրա խոսքով՝ կապիտալ ծախսերի գծով հատկացումների աճը հիմնականում պայմանավորված է եղել Երեւան քաղաքում Ոստիկանության նոր պարեկային ծառայության եւ օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման համար շենք-շինությունների կապիտալ վերանորոգման, կառուցման շարունակական ծախսերի, գույքի, ավտոտրանսպորտային միջոցների, սպառազինության նախատեսման հանգամանքով:

Հաշվետու տարում ծախսվել է 80 մլրդ դրամ, կատարողականը կազմել է 98.9 տոկոս:

«Ոստիկանության ծառայողների հաշվետու տարվա միջին ամսական աշխատավարձը՝ ներառյալ պարգեւատրումները, կազմել են 289 հազար դրամ՝ըստ էության պահպանելով 2019-2021թթ տվյալ ցուցանիշի մակարդակը»,- ասաց Ֆիդանյանը:

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Մայրաքաղաքում տրանսպորտային հոսքերի անցանելիությունը մեծացնելու նպատակով հունիսի 2-ից երթեւեկության կազմակերպման փոփոխություն կկատարվի Սարալանջի փողոցում: Այս մասին նշված է Երեւանի քաղաքապետարանի տարածած հաղորդագրության մեջ:

Մասնավորապես, Աբովյան պուրակից դեպի Սարալանջի փողոց՝ նախկինում միակողմանի երթեւեկության հատվածում կկազմակերպվի երկկողմանի երթեւեկություն՝ հասարակական տրանսպորտի երթեւեկության համար նախատեսված առանձնացված գոտիով, ընդհանուր հոսքին հակառակ ուղղությամբ, ինչպես նաեւ բարձրացող ուղղության աջ մասում՝ մինչեւ հետիոտնային անցում կարգելվի տրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը:

Միաժամանակ, նշված ճանապարհահատվածում կիրականացվեն համապատասխան գծանշման եւ ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքներ:

ԼՈՒՐԵՐ

## ԴԻՄԵԼ ԵՆ ՄԻԵԴ

Ադրբեջանի կողմից մարտական հենակետեր սնունդ մատակարարող երկու հայ զինծառայողների առեւանգման փաստով Հայաստանը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ միջանկյալ միջոց կիրառելու պահանջով. այս մասին հայտնեցին միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակից:

«Մարտական հենակետեր սնունդ մատակարարող երկու հայ զինծառայողների առեւանգման փաստով Հայաստանը մայիսի 28-ին դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ միջանկյալ միջոց կիրառելու պահանջով: Դատարանը սպասում է Ադրբեջանի պատասխանին: Այս պահին հաստատվել է, որ տղաները գտնվում են Բաքվում, եւ ակնկալվում է, որ առաջիկա օրերին պատասխան կստանանք»,- հայտնեցին գրասենյակից:

## ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Մայիսի 22-29-ը մայրաքաղաքում իրականացված ծառայության ընթացքում Երեւանի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 4060 խախտում՝ պահպանվող հատուկ տարածք տեղափոխելով 174 մեքենա: Մասնավորապես, հայտնաբերվել է ոչ սթափ վիճակում մեքենա վարող 189, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 289 անձ: Հայտնաբերվել են հաշվառման համարանիշի հետ կապված 72, չամրակապված վարելու՝ 147, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 274, հետիոտնի ոչ սահմանված վայրով անցնելու՝ 357 իրավախախտումներ: 164 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 283-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 72-ը՝ թաղանթապատված դիմապակիով: Բացի այդ, տարբեր կասկածանքներով ձերբակալվել ու բաժիններ են տարվել 67 անձ: Նույն ժամանակահատվածում Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի եւ Արագածոտնի մարզերի պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 6598 խախտում՝ պահպանվող հատուկ տարածքներ տեղափոխելով 284 տրանսպորտային միջոց:

Հայտնաբերվել է ոչ սթափ վիճակում մեքենա վարող 127, առանց վարորդական իրավունքի վկայականի՝ 479 անձ: Հայտնաբերվել են հաշվառման համարանիշի հետ կապված 84, չամրակապված վարելու՝1085, վարելիս ծխախոտային արտադրատեսակ օգտագործելու՝ 127 իրավախախտումներ: 283 մեքենա շահագործվել է առանց ԱՊՊԱ պայմանագրի, 967-ը՝ տեխնիկական զննություն չանցած, 61-ը՝ թաղանթապատված դիմապակիով: Բացի այդ, տարբեր կասկածանքով ձերբակալվել ու բաժիններ են տարվել 48 անձ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 26-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 105 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ՝ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Արտաշատի թիվ 4 մսուր-մանկապարտեզում թունավորման բռնկումից հետո հաստատության մանկապարտեզի խոհանոցի գործունեությունը կասեցվել է: Այս մասին տեղեկանում ենք ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից:

«Հիմք ընդունելով հայտնաբերված խախտումները՝ մանկապարտեզի խոհանոցի գործունեությունը կասեցվել է, որը կվերացվի միայն կրկնակի փորձաքննության արդյունքներով անհամապատասխանություններ չհայտնաբերելու դեպքում»,- ասված է տեսչական մարմնի հաղորդագրությունում:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ մայիսի 18-ին թունավորում չճշտված ախտորոշմամբ 16 երեխա է տեղափոխվել «Արտաշատ» բժշկական կենտրոն: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ մանկապարտեզի ճաշացանկում ներառված սննդամթերքի (խաշած ձու, թանապուր, ոլոռով սուպ, մակարոնով փլավ) նմուշները հանձնվել են լաբորատոր հետազոտության, եւ հայտնաբերվել են անհամապատասխանություններ:

## ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Տոկիոյի Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Արթուր Դավթյանը 1 ոսկե եւ 2 բրոնզե մեդալ է նվաճել Բուլղարիայի Վառնա քաղաքում անցկացված սպորտային մարմնամարզության World Challenge Cup մրցաշարում:

Դավթյանը մրցաշարի հաղթողի տիտղոսը նվաճել է հենացատկում՝ եզրափակչում հավաքելով 14,799 միավոր: Նա հանդես է եկել նաեւ նժույգթափերի եւ օղակների վարժությունների եզրափակչում ու զբաղեցրել է երրորդ տեղը՝ արժանանալով բրոնզե մեդալների:

Նժույգթափեր վարժության եզրափակչում Դավթյանը՝ 14.223, իսկ օղակների վարժության եզրափակչում 14.066 միավոր է հավաքել:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ Արթուր Ավետիսյանը մրցաշարի հաղթողի տիտղոսը նվաճել է օղակների վարժությունում՝ կանգնելով պատվո հարթակի առաջին աստիճանին: Եզրափակչում նա 14.700 միավոր է հավաքել եւ դարձել ոսկե մեդալակիր:

World Challenge Cup մրցաշարի հաջորդ փուլը կանցկացվի հունիսի 8-ից 11-ը Խորվաթիայի Օսիջեկ քաղաքում:

Հայաստանի հավաքականի կազմում մրցաշարին կմասնակցեն Արթուր Դավթյանը, Արթուր Ավետիսյանը, Արթուր Թովմասյանը, Գագիկ Խաչիկյանը, ինչպես նաեւ Մանե Պողոսյանը:

Մարմնամարզիկները հանդես կգան մարզիչներ Հայկ Նազարյանի եւ Քնարիկ Բրսոյանի գլխավորությամբ: Հակոբ Սերոբյանը կլինի մրցավարական խմբում:

ԱՐՑԱԽ

# ԱՐՁԱԳԱՆՔ՝ ԱԼԻԵՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

**«Ադրբեջանի նախագահը քաջ գիտակցում է, որ Արցախի սուբյեկտայնության գլխավոր աղբյուրը հենց այդ պետական ինստիտուտներն են, եւ, փաստորեն, այդպիսի պահանջներով նա ճանաչում է այդ ինստիտուտների լեգիտիմությունն ու կարեւորությունը»,- «Արցախպրես»-ի հետ զրույցում նշել է Արցախի Հանրապետության նախագահի մամուլի խոսնակ Լուսինե Ավանեսյանը՝ ի պատասխան Արցախում պետական ատրիբուտները լուծարելու վերաբերյալ նախօրեին Ալիեւի արած հայտարարության:**



«Միաժամանակ նախագահ Հարությունյանը պատրաստակամություն է հայտնել սկսելու միջազգային ձեւաչափով երկխոսություն՝ միջազգային իրավունքի նորմերի եւ սկզբունքների, հատկապես՝ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի, ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառման, վեճերի խաղաղ կարգավորման եւ տարածքային ամբողջականության սկզբունքների հիման վրա: Ադրբեջանը հրադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո առաջին անգամ չէ Արցախի ժողովրդի հետ սպառնալիքի լեզվով խոսում, մենք տեսել ենք եւ տեսնում ենք ագրեսիվության դրսեւորումներ՝ տեղական մարտական գործողությունների, շրջափակման, էներգետիկ եւ այլ ճնշումների ձեւով:

Դրանց այս անգամ Ադրբեջանի նախագահը ավելացրել է Արցախի ժողովրդի ընտրված իշխանությունների վերաբերյալ ապօրինի պահանջները: Նախագահն ու Ազգային ժողովը կրում են Արցախի ժողովրդի առաջնային մանդատը՝ ընտրված ժողովրդավարական սկզբունքներով եւ Արցախի Հանրապետության Սահմանադրության հիման վրա: Իսկ Ադրբեջանի նախագահը քաջ գիտակցում է, որ Արցախի սուբյեկտայնության գլխավոր աղբյուրը հենց այդ պետական ինստիտուտներն են, եւ, փաստորեն, այդպիսի պահանջներով նա ճանաչում է այդ ինստիտուտների լեգիտիմությունն ու կարեւորությունը:

Հարավային Կովկասում տեւական խաղաղություն ապահովելուն միտված միջազգային ակտիվ ջանքերին զուգահեռ՝ Արցախի ժողովրդին ու պետականությանն ուղղված Ադրբեջանի նախագահի հերթական սպառնալիքները նպատակ ունեն հարվածի տակ դնելու այդ ջանքերի արդյունավետության հեռանկարը: Եվս մեկ անգամ ընդգծելով , որ Ադրբեջանը չի հարգում միջազգային որեւէ սկզբունք եւ պարտավորություն՝ նախագահ Հարությունյանը վերահաստատում է մայիսի 23-ի իր ուղերձի դրույթները՝ ուղղված եռակողմ հայտարարության կողմերին եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին»,- ասել է Լուսինե Ավանեսյանը:

Հիշեցնենք, որ նախօրեին Ադրբեջանի նախագահ Ալիեւը բռնազավթված Բերձորում հայտարարել էր. «Ղարաբաղի հայերին մնում է մեկ ճանապարհ՝ աղբարկղը նետել կեղծ «պետական ատրիբուտները», լուծարել խորհրդարանը եւ ենթարկվել Ադրբեջանի օրենքներին»:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ՝ ՀԱՎԻ ՄՍԻՑ

**ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից նախորդ մի քանի տարիներին արձանագրված սննդային թունավորումների վերլուծությունը ցույց է տվել, որ, հակառակ այն թյուր կարծիքի, թե ցանկացած աղիքային վարակ պայմանավորված է միայն սննդային գործոնով, դրանց գերակշիռ մեծամասնությունը երկրորդային կամ խաչաձեւ աղտոտման պատճառով են (ձեռքերի վրա գտնվող բակտերիաների ու վիրուսների փոխանցումը մթերքին):**

ՍԱՏՄ-ից հայտնում են, որ աշխարհի զարգացած երկրներում եւս ամեն տարի գրանցվող թունավորման դեպքերը հիմնականում պայմանավորված են մարդկային գործոնով՝ խաչաձեւ աղտոտում, պահման պայմանների խախտում, լվացման եւ ախտահանման, ինչպես նաեւ անձնական հիգիենայի կանոնների ոչ պատշաճ պահպանում եւ այլն: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարակված տվյալների՝ միկրոօրգանիզմներով աղտոտված սնունդ ուտելու հետեւանքով տարեկան 600 միլիոն մարդ է հիվանդանում:

Թեեւ 2021-ի (18 տնտեսավարողի մոտ) համեմատ 2022 (7 տնտեսավարողի մոտ) թվականին Հայաստանում թունավորման դեպքերը պակասել են 2,5 անգամ (ինչը նաեւ Տեսչական մարմնի արդյունավետ վերահսկողության արդյունքն է), սակայն, որպեսզի խնդիրը կանխատեսելի եւ կառավարելի լինի, անհրաժեշտ է նաեւ սպառողների ուշադրությունն ու պատասխանատու վերաբերմունքը:

Թունավորումների վերլուծությամբ առանձնացվել է երկու ռիսկ. թունավորման դեպքերի մոտ 90 տոկոսն արձանագրվում է հանրային սննդի կետերում, որտեղ կատարված ստուգումներով հայտնաբերվել են հիմնականում սանիտարահիգիենիկ բնույթի խախտումներ եւ աշխատակիցների նախնական եւ պարբերական բժշկական զննության անհամապատասխանություններ, թունավորումների 70 տոկոսի դեպքում օգտագործված սննդամթերքը եղել է հավի միսը:

Տեսչական մարմինը մշակել եւ կիրառում է վերահսկողության գործիքներ իր գործառույթների շրջանակում, սակայն հանրության զգոնությունն ազդեցիկ ու գործուն միջոց է սննդամթերքի անվտանգության ոլորտում թերացումները կանխելու եւ սննդային կամ խաչաձեւ աղտոտմամբ պայմանավորված թունավորումները նվազագույնի հասցնելու համար:

Հանրության հետ ակտիվ համագործակցությունը՝ ուղղված սննդային թունավորումների բացառմանը, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի առաջնահերթություններից է:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 36 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 55-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

# ԿՐԿՆԱԿԻ ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թ. հունիսի 20-ին՝ ժամը 13:00-ին, «Նոյյան Տապան» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձանց պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-4. ՀՀ ք. Հրազդան, Արտադրական գոտի, Գործարանային փող., թիվ 4 հասցեում գտնվող 166.08 քմ մակերեսով արտադրական բազա, 575.13 քմ մակերեսով օժանդակ շինություններ եւ 6860 քմ մակերեսով արդյունաբերական օբյեկտների համար նախատեսված հողամաս:

Մեկնարկային գինը սահմանվում է 348,515 ՀՀ դրամ:

Հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, այն կազմում է 8,520,120 ՀՀ դրամ եւ ներառված չէ գույքի շուկայական արժեքի մեջ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով «Նոյյան Տապան» ՍՊԸ-ի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ՝ 2472302180490020 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487/:

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Գ.

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Ա. Բաբաջանյան փողոց, 59 շենք, 17 հասցեում գտնվող 73,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27320000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Ավանգարդ 5-րդ թաղամաս, 9 շենք, 4 հասցեում գտնվող 109,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14020000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Օրբելյանների փողոց, 2 շենք, 4 հասցեում գտնվող 85.2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14030000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Անդրանիկի 1-ին թաղամաս, 26 հասցեում գտնվող 242,8 ք.մ. բնակելի տուն, 5,4 ք.մ. կաթսայատուն, 28 ք.մ. ծածկ, 5 ք.մ. /11 խ.մ./ պարիսպ, 26,4 ք.մ. ընդհանուր ներքին մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,048 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25700000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ ք., Վազգեն Առաջինի փողոց, 38ա շենք, 16 հասցեում գտնվող 83 ք.մ. բնակարան եւ 28,1 ք. մ. մակերեսով ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 23080000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Հովտաշատ, 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, 1 հասցեում գտնվող 206,2 ք.մ. բնակելի տուն, 2,3 ք. մ. կաթսայատուն, 19,8 ք.մ. անասնաշենք, 13,65 ք.մ. անասնաշենք, 20,35 ք.մ. անասնաշենք, 3,23 ք.մ. թռչնանոց, 28 ք.մ. ծածկ, 8,8 ք.մ. ծածկ, 3,42 ք.մ. ծածկ եւ 0,207 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 27770000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Ֆ. Նանսենի փողոց, 12 շենք, 5 հասցեում գտնվող 52,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 25000000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Շահումյան փողոց, 26 հասցեում գտնվող 228,78 ք.մ. բնակելի տուն, 5,77 ք.մ. կաթսայատուն, 230,62 ք.մ. օժանդակ շինություն, 15,48 ք.մ. /38,7 խ.մ./ պարիսպ եւ 0,1107 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 41300000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Ախուրյան, գյուղ Ախուրյան, Անկախության փողոց, 7 հասցեում գտնվող 216,62 ք.մ. բնակելի տուն եւ 0,062 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20900000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Զորափի փողոց, 5 հասցեում գտնվող 428,1 ք.մ. բնակելի տուն, 33,4 ք.մ. օժանդակ շինություն, 5,9 ք.մ. օժանդակ շինություն եւ 0,0762 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 304900000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Գավառ ք., Մովսիսյան փողոց, 20 հասցեում գտնվող 251,8 ք.մ. բնակելի տուն, 32,5 ք.մ. անասնագոմ, 14,1 ք.մ. մառան, 34,3 ք.մ. հացատուն, 19,2 ք.մ. /25,7 խ.մ./ պարիսպ եւ 0,109 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18500000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Սպանդարյան փողոց, 5 շենք, 7 հասցեում գտնվող 56,15 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9570000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Արարատյան զանգված, 9/6 հասցեում գտնվող 46,3 ք.մ. առեւտրի սրահ եւ 0,00546 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14230000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Հ. Այվազովսկու փողոց, 8/1 հասցեում գտնվող 300,2 ք.մ. բնակելի տուն, 48 ք.մ. անասնաշենք, 26,9 ք.մ. կիսակառույց, 7 ք.մ. ծածկ եւ 0,0461 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամաս, 4-րդ փողոց, 8/2 հասցեում գտնվող 209,3 ք.մ. բնակելի տուն եւ 0,03949 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 28380000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 4-րդ նրբանցք, 7ա շենք, 21 հասցեում գտնվող 78,2 ք.մ. բնակարան եւ 5,7 ք.մ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 34070000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, գյուղ Զովունի, 12-րդ փողոց, 28 հասցեում գտնվող 100,5 ք. մ. բնակելի տուն, 26,5 ք.մ. ներքին մակերեսով ինքնակամ կառուցված թոնրատուն, 5,5 ք.մ. ներքին մակերեսով ինքնակամ կառուցված թռչնանոց եւ 0,04801 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 26200000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 2-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս, 1 շենք, 27 հասցեում գտնվող 77,2 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15300000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք?, 5-րդ թաղամաս, 8 շենք, 35 հասցեում գտնվող 71,66 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15300000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Զ. Անդրանիկի փողոց, 100 շենք, 41 հասցեում գտնվող 80,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33000000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Կոմիսարների փողոց, 2/1 հասցեում գտնվող 390,51 ք.մ. բնակելի տուն, 136,6 ք.մ. կիսակառույց շինություն, 1,42 ք.մ. /3,27 խ.մ./ պարիսպ եւ 0,072 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 28500000 ՀՀ դրամ:
- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Աբովյան փողոց, 3 շենք, 1 հասցեում գտնվող 85,78 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13400000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Տեր Սիմոնյան փողոց, 23 հասցեում գտնվող 201,3 ք.մ. բնակելի տուն եւ 0,071 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14200000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Ն. Աճեմյան փողոց, 43 հասցեում գտնվող 117,6 ք.մ. բնակելի տուն, 38,4 ք.մ. մառան եւ 0,053 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 10700000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Նոր քաղաքի տարածք, 6-րդ թաղամաս, 51 հասցեում գտնվող 246 ք.մ. բնակելի տուն եւ 0,076 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Երեւանյան խճուղի, 113/1-20 հասցեում գտնվող 355,64 ք.մ. հանդիսությունների սրահ եւ 0,0409 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 85800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Աղայան փողոց, 78/1 շենք, 13 հասցեում գտնվող 81,92 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13000000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Իսահակյան փողոց, 2-րդ նրբանցք, 3 շենք, 24 հասցեում գտնվող 49,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7400000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Թումանյան փողոց, 1 շենք, 16 հասցեում գտնվող 49,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10400000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, Ստեփանավան ք., Կամոյի փողոց, 36 հասցեում գտնվող 208,1 ք.մ. բնակելի տուն, 13,8 ք.մ. տնտեսական մաս, 2,5 ք.մ. /1,5 խ.մ./ պարիսպ եւ 0,076 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22020000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի, Վեդի ք., Թումանյան փողոց, 3/2 շենք, 3 հասցեում գտնվող 56,97 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11700000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Հ. Բաղրամյան փողոց, 14 հասցեում գտնվող 225,7 ք.մ. բնակելի տուն եւ 0,082 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 32060000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Նոր Խարբերդ, 11-րդ փողոց, 31 հասցեում գտնվող 76 ք.մ. բնակելի տուն, 2,95 ք.մ. /6,2 խ.մ./ պարիսպ եւ 0,01672 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18900000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Մ. Ստեփանյան փողոց, 14 շենք, 28 հասցեում գտնվող 77,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14370000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Մ. Պապյան փողոց, 24 շենք, 26 հասցեում գտնվող 56 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11040000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Հ. Ավետիսյան փողոց, 22/31 հասցեում գտնվող 18,4 ք.մ. տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 4520000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Երկաթուղայինների փողոց, 9 շենք, 6 հասցեում գտնվող 87 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 18470000 ՀՀ դրամ:
- Սյունիքի մարզ, համայնք Կապան ք., Բաղաբերդ թաղամաս, 20 շենք, թիվ 14 հասցեում գտնվող 77.1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14800000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Թումանյան փողոց, 6 շենք, 17 հասցեում գտնվող 41,93 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10750000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-2 ՔՇՀ 3 թաղամաս, 31 շենք, 2 հասցեում գտնվող 63.8 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 7600000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Տարոն-4 ՄՄՇ, 7 շենք, 19 հասցեում գտնվող 77,92 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9600000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., 3-րդ միկրոշրջան, 17 շենք, 16 հասցեում գտնվող 47,88 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա, Սեբաստիա 24/2 շենք, 49 հասցեում գտնվող 63.1 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27880000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Վ. Արտաշատ, Երեւանյան փողոց, 2 հասցեում գտնվող 360,3 ք.մ. բնակելի տուն, 5,2 ք.մ. մառան եւ 0,131 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 23760000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Մասիս Կայարան, Գործարանային փողոց, 6/1 հասցեում գտնվող 59.5 ք.մ. խանութ եւ 0.004055 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9860000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Մասիս ք., Նոր թաղամաս, 37 շենք, 30 հասցեում գտնվող 59.3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13540000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Սիլիկյան թաղամասի 8-րդ փողոց, 1 հասցեում գտնվող 286 ք.մ. բնակելի տուն, 69,2 ք.մ. ինքնակամ շինություններ եւ 0,04486 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 40350000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Բագրատունյաց փողոց, 53 շենք, 64 հասցեում գտնվող 75,88 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 33600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Գ. Նժդեհի փողոց, 27/2 շենք, 44 հասցեում գտնվող 70,28 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30500000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Էստոնական փողոց, 9 շենք, 28 հասցեում գտնվող 70,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 31540000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Եղվարդ, Եղվարդ ք., Աբովյան փողոց, 42 հասցեում գտնվող 289,1 ք.մ. բնակելի տուն, 10,2 ք.մ. սանհանգույց, 54,9 ք.մ. ավտոտնակ, 37,2 ք.մ. անասնաշենք, 20 ք.մ. ամառային խոհանոց, 15,1 ք.մ. կաթսայատուն, 23,7 ք.մ. ծածկ, 9,7 ք.մ. /19,4 խ.մ., 48,5 գծամետր/ պարիսպ եւ 0,145 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45600000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Սայաթ-Նովայի փողոց, 21ա շենք, 38 հասցեում գտնվող 94,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 78860000 ՀՀ դրամ

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 15.06.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 10.07.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Գ.

# ԿՐԿՆԱԿԻ ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

**2023թ. հունիսի 20-ին՝ ժամը 12:30-ին, պարտապան Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝**

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 940,219 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ՝ 2472303816560000 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Ա. Էլոյանին / 094 411 487/:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ՍԼԱՎՅԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ 2023»

# ՄԱՇԱ ՄՆՋՈՅԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

**«Սլավյանսկի բազար 2023» երիտասարդ կատարողների մրցույթում, որը տեղի կունենա հուլիսի 12-17-ը Բելառուսում, Հայաստանը կներկայացնի երգչուհի Մաշա Մնջոյանը: Մաշա Մնջոյանը կրթությունը շարունակելու նպատակով Ավստրալիայում է եւ պատրաստակամություն է հայտնել լինել «Սլավյանսկի բազար» ամենամյա մրցույթի հայաստանյան պատվիրակը:**



«Այս պահին Մաշայի հետ երգերի ընտրության շուրջ քննարկման փուլում ենք, եւ հաջորդ շաբաթ արդեն հայտնի կլինեն, թե ինչ ստեղծագործություններով Մաշան կներկայանա այդ հեղինակավոր մրցույթում»,- տեղեկացնում է «Սլավյանսկի բազար» հեղինակավոր մրցույթի հայաստանյան պատվիրակության ղեկավար Վրեժ Կիրակոսյանը:

Մնջոյանն էլ խոստովանում է՝ երբ առաջարկը ստացել է, շատ է ուրախացել ու միանգամից համաձայնել: «Ասացի՝ ինչ լավ է, որ ինձ դեռ հիշում են Հայաստանում, ու նորից կարող եմ իմ արվեստով ծառայել իմ երկրին»,- ասում է երգչուհին եւ հավելում՝ միշտ պատրաստ է Հայաստանը ներկայացնել միջազգային հեղինակավոր մրցույթներում:

«Ավստրալիայի երաժշտական ինստիտուտի «Երաժշտության ընդհանուր բաժնի» մագիստրատուրան ավարտելուց հետո Մաշա Մնջոյանը համագործակցում է եվրոպացի երգիչների եւ երաժիշտների հետ, երգում է տարբեր բեմերում: Համերգներին փորձում է ներկայացնել հայկական երաժշտությունը՝ հանդիսատեսին ծանոթացնելով Հայաստանին: Նրա խոսքով՝ օտարները հավանում են հայկական երաժշտությունը, անգամ հուզվում են:

«Շուտով կլինեմ Հայաստանում, որպեսզի ավելի լավ նախապատրաստվեմ մրցույթին եւ հայաստանյան պատվիրակության հետ մեկնեմ Բելառուս»,- ուրախությամբ շեշտում է Մնջոյանը: Մաշա Մնջոյանն ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բակալավրը եւ մագիստրատուրան: 2013 թվականին Հայաստանը ներկայացրել է Յուրմալայում կայացած «Նոր ալիք» երգի միջազգային մրցույթում: Նույն թվականին դարձել է «Հայաստանի ձայնը» հեռուստանախագծի առաջին մրցույթի հաղթող:

ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ԳԱԿ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Գեղագիտության ազգային կենտրոնի հրավերով մայիսի 27-ից հունիսի 15-ը Վրաստանից եւ Իրանից Հայաստան ժամանած ժամանակակից արվեստագետները վարպետության դասեր, աշխատաժողովներ եւ հանդիպումներ կանցկացնեն Հայաստանում:**



Կենտրոնն իր երեւանյան եւ մարզային ստորաբաժանումներով կդառնա արվեստային մեծ հարթակ այդ արվեստագետների համար՝ իրականացնելու եւ ներկայացնելու իրենց նախագծերն ու փորձը, փոխանցելու գիտելիքներն ու հմտությունները հայ պատանիներին եւ երիտասարդներին, հանդիպելու եւ փորձի փոխանակում ունենալու Հայաստանի տարբեր համայնքների արվեստագետների հետ:

Տիկնիկագործություն, պար, վիզուալ արվեստ, գեղագրություն, պատմասացություն. նախագիծն ընդգրկուն է եւ հետաքրքիր: Այն դառնալու է մշակութային խաչմերուկ երեք երկրների արվեստագետների եւ արվեստասերների համար:

Ուսումնաճանաչողական եւ ստեղծագործական այս նախագիծը նաեւ հրաշալի հնարավորություն է մարզային արվեստասեր հանրության համար՝ ծանոթանալու միջազգային արվեստագետներին եւ նրանց ստեղծած արվեստին, ստեղծագործելու եւ ներկայացնելու տվյալ մարզի ազգային մշակութային ավանդույթներն ու հնարավորությունները: Հրավիրյալ արվեստագետներին եւս մշակութային օրակարգ է սպասվում: Հայկական արվեստին ու մշակույթին ավելի լավ ծանոթանալու համար նախատեսվում են այցելություններ թանգարաններ եւ արվեստի այլ կենտրոններ:

Նախագիծը մեկնարկը կտրվի մայիսի 30-ին՝ ԳԱԿ պատկերասրահում վրացի արվեստագետ Գիորգի Միսաուրիի աշխատանքների անհատական ցուցահանդեսով: Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնը «ԳԱԿ մշակութային խաչմերուկ. ժամանակակից արվեստագետների այց Վրաստանից եւ Իրանից» նախագիծն իրականացնում է Իրանի եւ Վրաստանի գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ



Երգչուհի Սիրուշոն հայտնել է, որ այս ամռանը՝ հուլիսի 15-ին, Կողբի փառատոնի շրջանակներում նա իր թիմով հանդես կգա համերգային շրջագայությամբ Տավուշի մարզում: Ի դեպ, հուլիսի 15-ին Հայաստանում նշվում է Վարդավառի տոնը:

«Այս ամառը ես եւ թիմս ելույթով այցելելու ենք Տավուշ»,- նշել է նա:

## ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ՝ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Երգչուհի Աստղիկ Սաֆարյանը տեւական դադարից հետո նկարահանում է նոր տեսահոլովակ, բայց այս անգամ ոչ թե Փարիզում կամ Մադրիդում, այլ Հայաստանում՝ Վայոց ձորի մարզում:

Երգչուհին «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում իր հետեւորդների համար նկարահանման հրապարակից լուսանկարներով է կիսվում:

## ԴԻՄԱՆԿԱՐ՝ ԴՈԼԼԱՐՆԵՐՈՎ

Լեոնարդո Դի Կապրիոն համարվում է հոլիվուդյան ամենապահանջված աստղերից մեկը: Նախօրեին նրա դիմանկարը վաճառվել է Կաննի 76-րդ կինոփառատոնի բարեգործական աճուրդում 1,3 մլն դոլարով: Այս մասին հայտնում է Variety-ն:

Օրերս Կաննում կայացել է amfAR գալա երեկոն, որի ընթացքում միջոցներ են հավաքվում ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համար: Լոտերից մեկում պատկերված էր Լեոնարդո Դի Կապրիոյի իսկայական ու յուրահատուկ դիմանկարը: Կտավի նոր սեփականատերը Քրիստիան Լեւեթն է, ում, ըստ ամենայնի, չի շփոթեցրել աշխատանքի արժեքը:

Նշվում է, որ դերասանը Կանն է ժամանել մոր հետ: Մասնակիցների թվում էին նաեւ Եվա Լոնգորիան, Քեյթ Բեքինսեյլը եւ Հայդի Քլումը, Հելսին, Գլեդիս Նայթն ու Ադամ Լամբերտը:

*● Մայիսի 31-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Էվրիդիկե» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ´Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ



*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ՆԻՍՏԵՐ

**ՀԱՐՑ. Ես կարո՞ղ եմ մասնակցել մեր համայնքի ավագանու նիստերին:**

*Հայրիկ Նազարյան (48 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ մասի՝ համայնքի ավագանու նիստը հրապարակային է: Ավագանու կանոնակարգով նախատեսված դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ նիստեր եւ քննարկումներ:

Բացի այդ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաեւ համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը՝ տասը հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, երկու տոկոսը՝ հազարից մինչեւ տասը հազար բնակիչ ունեցող համայնքներում, եւ չորս տոկոսը՝ մինչեւ հազար բնակիչ ունեցող համայնքներում:

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները եւ ներկայացնում են համայնքի ղեկավարին: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը պարտադիր կարգով ներկայացվում եւ քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ո՞վ կարող է աշխատել որպես ուսուցիչ:**

*Ամալյա Գալեյան (24 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի՝ ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, որը ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն եւ վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաեւ՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող եւ տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական եւ ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Երեւանում*



Հաջողությամբ կայացավ Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնը՝ լի բազմաշերտ գրական իրադարձություններով, նոր բացահայտումներով ու գրքային անցուդարձով:



## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:





2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:



## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*



## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| Շիրակ | +8 +12 / +18 +22 |
| Կոտայքի լեռներ | +8 +11 / +17 +20 |
| Կոտայքի նախալեռներ | +13 +16 / +22 +24 |
| Գեղարքունիք | +7 +11 / +17 +21 |
| Լոռի | +11 +16 / +22 +26 |
| Տավուշ | +13 +18 / +25 +28 |
| Արագածոտնի լեռներ | +7 +11 / +15 +19 |
| Արագածոտնի նախալեռներ | +12 +16 / +20 +25 |
| Արարատ | +15 +17 / +25 +28 |
| Արմավիր | +13 +16 / +24 +27 |
| Վայոց ձորի լեռներ | +7 +10 / +17 +20 |
| Վայոց ձորի նախալեռներ | +15 +17 / +25 +28 |
| Սյունիքի հովիտներ | +17 +21 / +30 +35 |
| Սյունիքի նախալեռներ | +10 +15 / +24 +27 |
| Արցախ | +17 +20 / +27 +32 |
| Երեւան | +14 +16 / +25 +27 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*